

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▯B ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 թվականի հուլիսի 4-ի թիվ 690/2008 կանոնակարգ (ԵՀ)՝
Համայնքում որոշակի բույսի առողջությանը սպառնացող վտանգների ենթարկվող
«պաշտպանված գոտիները» ճանաչող

(Վերամշակված)

(ՊՏ L 193, 22.07.2008թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		Թիվ	էջ	ամսաթիվ
▯M1	Հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 823/2009 կանոնակարգ (ԵՀ)	L 239	46	10.09. 2009թ.
M2	Հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 8-ի թիվ 17/2010 կանոնակարգ (ԵՄ)	L 7	1	12.01. 2010թ.
M3	Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 27-ի թիվ 361/2010 կանոնակարգ (ԵՄ)	L 106	5	28.04 2010թ.
▯M4	Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 436/2011 կիրարկող կանոնակարգ (ԵՄ)	L 118	2	06.05. 2011թ.
M5	Հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 24-ի թիվ 355/2012 կիրարկող կանոնակարգ (ԵՄ)	L 113	2	25.04 2012թ.

▼B

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 թվականի հուլիսի 4-ի թիվ 690/2008 կանոնակարգ (ԵՀ)՝
Համայնքում որոշակի բույսի առողջությանը սպառնացող վտանգների ենթարկվող
«պաշտպանված գոտիները» ճանաչող
(Վերամշակված)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը՝ «Բույսերի եւ բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմները Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանց տարածման դեմ պաշտպանիչ միջոցների մասին»¹, եւ, մասնավորապես, դրա 2(1)(ը) հոդվածի առաջին ենթապարբերությունը,

հաշվի առնելով Իռլանդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Կիպրոսի, Լիտվայի, Մալթայի, Ավստրիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի եւ Սլովակիայի կողմից ներկայացված դիմումները,

Քանի որ

- 1) Հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 8-ի 2001/32/ԵՀ հրահանգը՝ Համայնքում որոշակի բույսի առողջությանը սպառնացող վտանգների ենթարկվող «պաշտպանված գոտիները» ճանաչող եւ 92/76/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող² զգալիորեն փոփոխվել է մի քանի անգամ: Հրահանգը տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով պետք է վերամշակվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջվում են լրացուցիչ փոփոխություններ:

¹ՊՏ L 169, 10.07.2000 թ., էջ 1: Հանձնաժողովի 2008/64/ԵՀ հրահանգով (ՊՏ L 168, 28.06.2008թ., էջ 31) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

²ՊՏ L 127, 9.05.2001թ., էջ 38: 2007/40/ԵՀ հրահանգով (ՊՏ L 169, 29.06.2007թ., էջ 49) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

- 2) 2000/29/ԵՀ հրահանգի դրույթների համաձայն՝ որոշակի բույսի առողջությանը սպառնացող վտանգների ենթարկվող «պաշտպանված գոտիները» հնարավոր է որոշել եւ, հետեւաբար, կարելի է ապահովել ներքին շուկայի հետ համատեղելի համապատասխան հատուկ պաշտպանություն: Այդպիսի գոտիները սահմանվել են Խորհրդի 2001/32/ԵՀ հրահանգով:

- 3) Որոշակի անդամ պետություններ կամ անդամ պետություններում որոշակի տարածքներ ճանաչվում են որպես պաշտպանված գոտիներ՝ որոշակի վնասակար օրգանիզմների առումով: Որոշ դեպքերում ճանաչումը եղել է Նախնական, քանի որ չի տրամադրվել համապատասխան անդամ պետությունում կամ տարածքում տվյալ վնասակար օրգանիզմի բացակայությունը մատնանշող ամբողջական տեղեկություններ կամ այդպիսի օրգանիզմը ոչնչացնելուն ուղղված ջանքերը չեն ավարտվել: Այն դեպքում, երբ համապատասխան անդամ պետություններին տրամադրվել են անհրաժեշտ տեղեկություններ, տվյալ գոտիները պետք է ճանաչվեն որպես մշտապես պաշտպանված գոտիներ. Նախնական ճանաչման ժամկետը բացառիկ դեպքերում պետք է երկարաձգվի լրացուցիչ սահմանափակ ժամկետով՝ անդամ պետություններին անհրաժեշտ լրացուցիչ ժամանակ տրամադրելու համար՝ ներկայացնելու համար այնպիսի տեղեկություններ, որոնք մատնանշում են օրգանիզմի բացակայությունը կամ, անհրաժեշտության դեպքում, ավարտել այդ օրգանիզմը ոչնչացնելուն ուղղված ջանքերը: Այլ դեպքերում պաշտպանված գոտիներն այլևս չպետք է ճանաչված լինեն որպես այդպիսին, քանի որ արդեն առկա են վնասակար օրգանիզմներ:

- 4) Կիպրոսը պայմանականորեն ճանաչվել էր որպես պաշտպանված գոտի՝ խաղողի ֆիլոքսերայի (*Daktulosphaira vitifoliae* (Fitch)) , սոճու խոշոր կեղեւակերների (*Ips sexdentatus* Börner)– եւ կոլորադյան բզեզի (*Leptinotarsa decemlineata* Say) առումով մինչեւ 2008 թվականի մարտի 31-ը: Նախնական ճանաչումը տրամադրելուց հետո Կիպրոսի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է, որ այդ օրգանիզմներն առկա չեն Կիպրոսում: Այդ պատճառով, Կիպրոսն այդ օրգանիզմների առումով ճանաչվել է որպես մշտապես պաշտպանված գոտի:

5) Իսպանիայի որոշակի գոտիներ ճանաչվել են որպես պաշտպանված գոտիներ՝ *Thaumetopoea pityocampa*-ի (Den. and Schiff.) առումով Իսպանիայի կողմից տրամադրված տեղեկություններից հետեւում է, որ այդ օրգանիզմը ներկայումս հաստատված է այդ շրջաններում: Հետեւաբար, նրանք այլևս չպետք է ճանաչվեն որպես այդ օրգանիզմի առումով պաշտպանված գոտի:

6) Իտալիայի, Ավստրիայի, Սլովենիայի եւ Սլովակիայի որոշ շրջաններ եւ Իռլանդիայի ու Լիտվայի ամբողջ տարածքը պայմանականորեն ճանաչվել էր որպես պաշտպանված գոտի՝ Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքի (*Erwinia amylovora*(Burr.) Winsl. et al)) բակտերիայի առումով՝ մինչեւ 2008 թվականի մարտի 31-ը:

7) Իռլանդիայի, Լիտվայի եւ Սլովակիայի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է որ Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքի (*Erwinia amylovora* (Burr.) Winsl. et al) առումով այդ երկրների համար պաշտպանված գոտիների նախնական ճանաչման ժամկետը պետք է բացառության կարգով երկարաձգվի երկու տարով՝ այդ անդամ պետություններին ժամանակ տրամադրելու համար, որպեսզի նրանց ներկայացնեն այդ օրգանիզմի բացակայությունը մատնանշող տեղեկություններ, կամ, անհրաժեշտության դեպքում, ավարտեն դրա ոչնչացմանն ուղղված իրենց ջանքերը:

8) Իտալիայի եւ Սլովենիայի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է, որ Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքը (*Erwinia amylovora* (Burr.) Winsl. et al) ներկայումս արմատավորվել է որոշ շրջաններում, որոնք նախկինում նախնական ճանաչվել են որպես այդ օրգանիզմի առումով պաշտպանված գոտիներ՝ մինչեւ 2008 թվականի մարտի 31-ը: Հետեւաբար, այդ շրջաններն այլևս չպետք է ճանաչված լինեն որպես այդ օրգանիզմի առումով պաշտպանված:

9) Ավստրիայի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է, որ 2007 թվականի անբարենպաստ պայմանների պատճառով տեղի են ունեցել Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքի (*Erwinia amylovora* (Burr.) Winsl. et al) մի քանի բռնկումներ դրա տարածքի որոշ մասերում, որոնք նախնական ճանաչվել էին որպես այս վնասակար

օրգանիզմի առումով պաշտպանված գոտիներ: Այս պատճառով, որոշակի շրջանների համար պաշտպանված գոտիների նախնական ճանաչումը Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքի (*Erwinia amylovora* (Burr.) Winkl. et al) առումով պետք է երկարաձգվի մեկ տարով՝ Ավստրիային անհրաժեշտ ժամանակ տրամադրելու համար, որպեսզի այն ստուգի՝ արդյոք 2007 թվականին Ավստրիայի կողմից ձեռնարկված ոչնչացմանն ուղղված ջանքերն արդյունավետ են եւ ցույց տալու համար, որ Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքն (*Erwinia amylovora* (Burr.) Winkl. et al) այլեւս առկա չէ կամ, անհրաժեշտության դեպքում, այդ օրգանիզմը ոչնչացնելուն ուղղված դրա ջանքերը՝ 2008 թվականին ավարտին հասցնելու համար:

10) Մալթան նախնական ճանաչվել էր որպես *Citrus tristeza* վիրուսի (եվրոպական շտամներ) առումով պաշտպանված գոտի՝ մինչեւ 2008 թվականի մարտի 31-ը: Մալթայի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է, որ այդ օրգանիզմը ոչնչացնելուն ուղղված ջանքերը հաջողության են հասել: Հետեւաբար, Մալթան պետք է ճանաչվի որպես այդ օրգանիզմի առումով մշտապես պաշտպանված գոտի:

11) Պորտուգալիայի տարածքը ճանաչվել է որպես *Citrus tristeza* վիրուսի (եվրոպական շտամներ) առումով պաշտպանված գոտի: Պորտուգալիայի կողմից ներկայացված տեղեկություններից հետեւում է, որ այդ օրգանիզմը ներկայումս արմատավորվել է դրա տարածքի մի մասում: Հետեւաբար, Պորտուգալիայի տարածքի այդ մասն այլեւս չի կարող ճանաչված լինել որպես այդ օրգանիզմի առումով պաշտպանված գոտի:

12) Հետեւաբար, անհրաժեշտ է ձեւափոխել պաշտպանված գոտիների գոյություն ունեցող նշանակումը:

13) Անցյալում պաշտպանված գոտիները ճանաչվում եւ փոփոխվում էին սույն Հրահանգով: Անդամ պետությունների կողմից ժամանակին իրականացվող եւ միաժամանակյա կիրարկմանը հասնելու համար պաշտպանված գոտիները պետք է ճանաչվեն սույն Կանոնակարգով:

14) Սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը:

15) Սույն Հրահանգի դրույթները չպետք է հակասեն II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում ընդգրկելու եւ դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Առաջին հավելվածում թվարկված Համայնքի գոտիները ճանաչվում են որպես պաշտպանված՝ 2000/29/ԵՀ հրահանգի 2(1)(ը) հոդվածի առաջին ենթապարբերության իմաստով՝ սույն Կանոնակարգի առաջին հավելվածում դրանց անունների դիմաց թվարկված վնասակար օրգանիզմ(օրգանիզմների)ի առումով:

Հոդված 2

Երկրորդ հավելվածի Ա մասում նշված ակտերով փոփոխված 2001/32/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով երկրորդ հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու եւ դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած ճանաչված կանոնակարգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Կանոնակարգին արված հղումներ եւ պետք է ընթերցվեն ըստ 3-րդ հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 3

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից սկսած:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում :

ՀԱՎԵԼՎԱԾ I

Համայնքում որպես «պաշտպանված գոտիներ» ճանաչված գոտիներ՝ դրանց անվանումների դիմաց թվարկված վնասակար օրգանիզմ(օրգանիզմներ)ի առումով

Վնասակար օրգանիզմներ	Պաշտպանված գոտիներ՝ տարածք
ա) Միջատներ, տզեր, նեմատոդներ (կլոր որդեր), դրանց զարգացման բոլոր փուլերում	
1. <i>Anthonomus grandis</i> (Boh.)	Հունաստան, Իսպանիայի (Անդալուսիա, Կատալոնիա, Էքստրեմադուրա, Մուրսիա, Վալենսիա)
2. Ծխախոտի սպիտակաթելիկ (<i>Bemisia tabaci</i> Genn) (եվրոպական պոպուլյացիաներ)	Իռլանդիա, Պորտուգալիա (Ազոռես, Բեյրա Ինտերիո, Բեյրա Լիտորալ, Ենտոն Դոուրո է Մինիո, Մադեյրա, Ռիբատեխո է Օեստե (Ալկոբաչա, Ալենքուեր, Բոմբարրալ, Կադավալ, Կալդաս դա Ռայնիա, Լուդինհա, Նազաոն, Օբիդոս, Պենիչե եւ Տոռես Վեդոաս) եւ Տոաս-օս-Մոնտես համայնքներ), Ֆինլանդիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն
3. <i>Cephalcia lariciphila</i> (Klug.)	Իռլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա, Մեն կղզի եւ Ջերսի)
3.1. Խաղողի ֆիլոքսերա	Կիպրոս

(<i>Daktulosphaira vitifoliae</i> (Fitch))	
4. <i>Dendroctonus micans</i> Kugelan	Իռլանդիան, Հունաստանը ՊՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Միացյալ Թագավորությունը (Հյուսիսային Իռլանդիան, Մեն կղզին եւ Ջերսին) http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:20::NOT32011R0436:
5. <i>Gilpinia hercyniae</i> (Hartig)	Իռլանդիա, Հունաստան ՊՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա, Մեն կղզի եւ Ջերսի) http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:20::NOT32011R0436:
6. Կարտոֆիլի սպիտակագույն նեմատոդ (<i>Globodera pallida</i> (Stone) Behrens)	Լատվիա, Սլովենիա, Սլովակիա, Ֆինլանդիա
7. <i>Gonipterus scutellatus</i> Gyll	Հունաստան ՊՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Պորտուգալիա (Ազոռես)
8. <i>Ips amitinus</i> Eichhof	Իռլանդիա, Հունաստան ՊՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Ֆրանսիա(Կորսիկա), Միացյալ Թագավորություն
9. <i>Ips cembrae</i> Heer	Իռլանդիա, Հունաստան ՊՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա եւ Մեն կղզի)

10. <i>Ips duplicatus</i> Sahlberg	Իռլանդիա, Հունաստան ՍՄ4 (մինչև 2014 թվականի մարտի 31-ը) , Միացյալ Թագավորություն՝
11. <i>Ips sexdentatus</i> Börner	Իռլանդիա, Կիպրոս, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա եւ Մեն կղզի)
12. <i>Ips typographus</i> Heer	Իռլանդիա, Միացյալ Թագավորություն
13. Կոլորադյան բզեզ (<i>Leptinotarsa decemlineata</i> Say)	Իռլանդիա, Իսպանիա (Իբիցա եւ Մենորկա), Կիպրոս, Մալթա, Պորտուգալիա (Ազոռես եւ Մադեյրա), Ֆինլանդիա (Աալանդի, Հաամեի, Կիմի, Պիրկանմայի, Սատակունտայի, Տուոկուի, Ուուսիմաայի տարածքները), Շվեդիա (Բլեկինջի, Գոթլենդի, Հալլանդի, Կալմարի եւ Սկաանեի նահանգներ), Միացյալ Թագավորություն
14. Մորմազգիների ականոդ (<i>Liriomyza bryoniae</i> (Kaltenbach))	Իռլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա)
15. <i>Sternochetus mangiferae</i> <i>Fabricius</i>	Իսպանիա (Գրենադա եւ Մալագա), Պորտուգալիա (Ալենտեխո, Ալգառվե եւ Մադեյրա)
բ) Բակտերիաներ	
1. <i>Curtobacterium flaccumfaciens</i> pv. <i>flaccumfaciens</i> (Hedges) Col.	Հունաստան, Իսպանիա, Պորտուգալիա

2. Պտղատու ծառերի բակտերիալ այրվածքը (<i>Erwinia amylovora</i> (Burr.) Winsl. et al)	— Էստոնիա, ՊՄ5 Իսպանիա (բացառությամբ Կաստիլա ի Լեոնի ինքնավար համայնքների) □ , Ֆրանսիա (Կորսիկա), Իտալիա (Աբուուզո, Բագիլիկատա, Կլաբրիա, Կամպանիա, Ֆրիուլի-Վենետիկ Գուլիա, Լացիո, Լիգուրիա, Մարչե, Մոլիզե, Պյեմոն, Սարդինիա, Սիցիլիա, Տոսկանյա, Ումբրիա, Վալ դ'Աոստա), Լատվիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա, Մենի կղզի եւ Նորմանդական կղզիներ), — ՊՄ5 եւ, մինչեւ 2014 թվականի մարտի 31-ը՝ Իռլանդիան, Իտալիան (Ապուլիա, Էմիլիա-Ռոմանյա (Պարմայի եւ Պիասենզայի մարզերը), Լոմբարդի (բացառությամբ Մանտուա մարզի), Վենետո (բացառությամբ Ռոմբիոնո եւ Վենետիկի պրովինցիաների, Պադովա մարզի Կաստելբալդո, Բադոնա, Պիասենզա դ'Ադիգե, Վեսկովանա, Ս. Ուրվանո, Բոառա Պիսանի եւ Մասի համայնքների եւ Վեռոնա պրովինցիայի Ա4 մայրուղուց հարավ գտնվող տարածք է)), Լիտվա, Սլովենիա (բացառությամբ Գորենյսկա, Կոռոսկա, Մարիբոր եւ Նոտրանյսկա շրջանների), Սլովակիա (բացառությամբ Բլահովա, Հոռնե Միտո եւ Օկոչ համայնքների (Դունայսկա Ստրեդա օկրուգ), Հրոնովչե եւ Հրոնսկե Կլաչանի (Լեվիս օկրուգ), Դվորի նադ Զիտավու (Նովի Զամկի օկրուգ) , Մալինեց (Պոլտառ օկրուգ), Հրիով (Ռոզնավա օկրուգ), Վելկե Ռիպաննի (Տոպոլչանի օկրուգ), Կազիմիր, Լուիինյա, Մալի Հոռեշ, Սվատուշե եւ Զատին (Տրեբիշով օկրուգ)) □ — ՊՄ1 եւ, մինչեւ 2009 թվականի մարտի 31-ը, Ավստրիան (Բուրգենլենդ, Կարինտիա, Ստորին Ավստրիան, Տիրոլ (Լինց վարչական շրջան), Ստիրիա, Վիեննա) □
գ) Սնկեր	
01. Շագանակի կեղեւի	Զեխիայի Հանրապետություն, Իռլանդիա ՊՄ1 Հունաստան (Կրետ եւ Լեսվոս) □, Շվեդիա եւ Միացյալ

քաղցկեղ, այրվածք (<i>Cryphonectria parasitica</i> (Murrill) Barr)	Թագավորություն (Մեն կղզու բացառությամբ)
1. <i>Glomerella gossypii</i> Edgerton	Հունաստան
2. <i>Gremmeniella abietina</i> Morelet	Իռլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա)
3. <i>Hypoxylon mammatum</i> (Wahl.) & Միլլեր	Իռլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա)
դ) Վիրուսներ եւ վիրուսանման օրգանիզմներ	
1. Beet necrotic yellow vein virus Ճակնդեղի ջղերի նեկրոտիկ դեղնում	Իռլանդիա, Ֆրանսիա (Բրետան), Պորտուգալիա (Ազոռես), Ֆինլանդիա, Միացյալ Թագավորություն (Հյուսիսային Իռլանդիա)
2. Լոլիկի պուտավոր թառամի վիրուս	Ֆինլանդիա, Շվեդիա
3. <i>Citrus tristeza</i> վիրուս	Հունաստան ՊՄ4 (բացառությամբ Առգոլիդա պրեֆեկտուրայի) , Ֆրանսիա (Կորսիկա), Մալթա, ՊՄ5

(եվրոպական շտամներ)	Պորտուգալիա (բացառությամբ Ալգարվեի եւ Մադեյրայի) □
▼M4	
4. Խաղողի վազի ոսկեփայլ դեղնում (<i>Grapevine flavescence dorée</i> MLO)	Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա (Ալզաս, Շամպայն–Առդեն եւ Լոռեն), Իտալիա (Բազիլիկատա) եւ (Սարդինիա, մինչեւ 2014 թվականի մարտի 31-ը)
▼B	

ՀԱՎԵԼ ՎԱԾ II

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգ՝ իր հաջորդական փոփոխությունների ցանկով

(2-րդ հոդվածում նշված)

Հանձնաժողովի 2001/32/ԵՀ հրահանգ (ՊՏ L 127, 09.05.2001թ., էջ 38)	
2002/29/ԵՀ հրահանգ (ՊՏ L 77, 20.03.2002թ., էջ 26)	
2003/21/ԵՀ հրահանգ (ՊՏ L 78, 25.03.2003 թ., էջ 8)	
2003/46/ԵՀ հրահանգ (ՊՏ L 138, 05.06.2003թ., էջ 45)	
2003 թվականի «Անդամակցության մասին» ակտ (ՊՏ L 236, 23.09.2003թ.)	20-րդ հոդված եւ II հավելված, էջ 443
2004/32/ԵՀ հրահանգ (ՊՏ L 85, 23.03.2004թ., էջ 24)	
2004/522/ԵՀ որոշում (ՊՏ L 228, 29.06.2004թ., էջ 18)	
2005/18/ԵՀ հրահանգ (ՊՏ L 57, 03.03.2005թ., էջ 25)	
2006/36/ԵՀ հրահանգ	

(ՊՏ L 88, 25.03.2006թ., էջ 13)	
2007/40/ԵՀ հրահանգ (ՊՏ L 169, 29.06.2007թ., էջ 49)	

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման եւ կիրառման ժամկետների ցանկը

(նշված՝ 2-րդ հոդվածում)

Հրահանգ	Փոխատեղման ժամկետը	Կիրառման ամսաթիվը
2001/32/ԵՀ	2001 թվականի մայիսի 21	2001 թվականի մայիսի 22
2002/29/ԵՀ	2002 թվականի մարտի 31	2002 թվականի ապրիլի 1
2003/21/ԵՀ	2003 թվականի մարտի 31	2003 թվականի ապրիլի 1
2003/46/ԵՀ	2003 թվականի հունիսի 15	2003 թվականի հունիսի 16
2004/32/ԵՀ	2004 թվականի ապրիլի 20	2004 թվականի ապրիլի 21
2005/18/ԵՀ	2005 թվականի	2005 թվականի

	մայիսի 14	մայիսի 15
2006/36/ԵՀ	2006 թվականի ապրիլի 30	2006 թվականի մայիսի 1
2007/40/ԵՀ	2007 թվականի հոկտեմբերի 31	2007 թվականի նոյեմբերի 1

ՀԱՎԵԼՎԱԾ III

Համեմատական աղյուսակ

2001/32/ԵՀ հրահանգ	Սույն Կանոնակարգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 3	—
—	Հոդված 2
Հոդված 4	—
5-րդ հոդված, առաջին պարբերություն	3-րդ հոդված, առաջին պարբերություն
5-րդ հոդված, երկրորդ պարբերություն	—
—	3-րդ հոդված, երկրորդ պարբերություն
Հոդված 6	—
Հավելված, (ա) կետ, 1, 2 եւ 3	1-ին հավելված, (ա) կետ, 1, 2 եւ 3
Հավելված, (ա) կետ, 3.1	Հավելված I, (ա) կետ, 3.1
Հավելված, (ա) կետ, 4-ից 15-ը	Հավելված I, (ա) կետ, 4-ից 15-ը
Հավելված, (ա) կետ, 16	—
Հավելված, (բ) կետ, 1	Հավելված I, (բ)

	կետ, 1
Հավելված, (բ) կետ, 2, առաջին պարբերությ	Հավելված I, (բ) կետ, 2, առաջին պարբերությ
—	Հավելված I, (բ) կետ, 2, երկրորդ պարբերությ
Հավելված, (բ) կետ, 2, երկրորդ պարբերությ	—
—	Հավելված I, (բ) կետ, 2, երրորդ պարբերությ
Հավելված, (գ) կետ, 01	Հավելված I, (գ) կետ, 01
Հավելված, (գ) կետ, 1-ից 3-ը	Հավելված I, (գ) կետ, 1-ից 3-ը
Հավելված, (դ) կետ, 1-ից 4-ը	Հավելված I, (դ) կետ, 1-ից 4-ը
—	Հավելված II
—	Հավելված III